ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 77-Ա ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2023 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 77-Ա որոշման անհրաժեշտությունը բխում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներից

2. Ընթացիկ իրավիճակը, խնդիրները և ակնկալվող արդյունքը

Տեղական ինքնակառավարման մարմինների որոշ լիազորություններն ու գործառույթները առավել արդյունավետ և պատշաճ իրականացնելու նպատակով աշխատակազմում և մասնավորապես՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում որոշ փոփոխություններ անելու անհրաժեշտությունից ելնելով, սույն նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները.

1.Չարենցավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալի հաստիքի հաստատում՝ պայմանավորված համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու պարագայում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի հրամայականով:

2.Աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գործառույթների բնույթի և պատասխանատվության աստիճանով պայմանավորված նախատեսվում է համայնքային ծառայության առաջատար մասնագետի՝ /պաշտոնի անձնագրի ծածկագիր 3.1-7 / հաստիքի կրճատում և գլխավոր մասնագետի հաստիքի ավելացում, քանզի յոթ հոգանոց ստորաբաժանումում ներկայումս առկա է միայն մեկ գլխավոր մասնագետի հաստիք:

3.Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սոցիալական պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման համար 5000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի աշխատակազմում ստեղծվում է համայնքի սոցիալական աշխատողի հաստիք: Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնում առկա է գլխավոր մասնագետի հաստիք, որի վրա պաշտոնի անձնագրով դրված է սոցիալական աշխատողի պարտականությունները, սակայն հաշվի առնելով Չարենցավան խոշորացված համայնքի բնակավայրերի քանակը /1 քաղաք և 5 գյուղ/ և բնակչության թվաքանակը /շուրջ 40000 բնակիչ/ մեկ սոցիալական աշխատողը ֆիզիկապես ի վիճակի չէ լիարժեք իրականացնելու ստանձնած պարտավորությունները:

Ուստի նպատակահարմար է համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնում ավելացնել «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 38-40-րդ հոդվածներով նախատեսված՝ սոցիալական աշխատանքի ևս մեկ մասնագետի՝ համայնքային ծառայության առաջատար մասնագետ սոցիալական սատարողի հաստիք:

4. 40000 բնակչությամբ խոշորացված համայնքի համար աշխատակազմում ներկայումս առկա միայն մեկ իրավաբան, այն էլ համայնքային ծառայության առաջատար մասնագետի հաստիք, որ բնականաբար չի կարող թեկուզև նվազագույն ծավալով հավուր պատշաճի իրականացնել ի գործառույթները, ուստի առաջարկվում է աշխատակազմում ավելացնել գլխավոր մասնագետ իրավաբանի հաստիք:

5. Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում նախատեսվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի համայնքային ծառայության պաշտոն: Գործող հաստիքացուցակում աշխատակազմի առաջատար մասնագետն ի իրավասության սահմաններում՝ պաշտոնի անձնագրով նախատեսված, վարում է «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված գրանցամատյանները, ինչպես նաև աշխատակազմի անձնական գործերը, ապահովում է համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և համայնքային ծառայության մրցութային, ատեստավորման հանձնաժողովների փաստաթղթային գործունեությունը: Ելնելով նշվածից նպատակահարմար ենք գտնում վերոնշյալ պարտականությունները ևս դնել աշխատակազմի այս առաջատար մասնագետի վրա: Առաջարկում ենք առաջատար մասնագետի /3.1-22 պաշտոնի անձնագրի ծածկագիր/ հաստիքը կրճատել և ավելացնել գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչ հաստիքը՝ աշխատանքի պատասխանատվությամբ և կարևորությամբ պայմանավորված:

6. Համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու պարագայում 7 և ավել անդամ ունեցող խմբակցություններին «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 67-րդ հոդվածի 4-րդ մասով տրամադրվում է՝ մեկ գործավար և մեկ փորձագետ, իսկ մինչև 7 անդամ ունեցող խմբակցությանը մեկ գործավարի հաստիք, որի արդյունքում անհրաժեշտ Չարենցավան համայքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում ավելացնել երկու փորձագետի երեք գործավարի հաստիքներ:

7. Համայնքի ղեկավարի և համայնքապետարանի այլ աշխատակիցների մամուլի ասուլիսների հարցազրույցների, տարբեր միջոցառումների, իրականացվող աշխատանքների տեսաձայնագրման գործառույթները իրականացնելու համար նախատեսվում է համայնքապետարանի աշխատակազմի տեխնիկական սպասարկման անձնակազմում ավելացնել տեսանկարահան օպերատորի հաստիք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ